208
৭-৩৯

N.º 3 – e

# ԳԻՏՈՒԹԻՒՆ
## ՍՈՒՐԲ ԳՐՈՑ:

Արարեալ համառօտ հարցմամբք և պատասխանեօք, յաղագս դեռահասակ մանկանց:

Թարգմանեալ ՚ի Ռուսաց լեզուէ ՚ի դպրն Յովհաննէսէ Բառնեան Չաղայեցւոյ:

Ի Հայրապետութեան Տ՟ն ԵՓՐԵՄԻ սրբազնագոյն կաթուղիկոսի ամ՟ Հայոց:

Հրամանաւ Աճարեալ քահանայապետութեան Տ՟ն Ներսէսի Առաքելագործ սրբոյն Արհիեպիսկոպոսի և վիճակաւոր առաջնորդի ամ՟ Հայոց Վրաստանի և այլոց:

Армянскаго Лазаревыхъ Института Восточныхъ языковъ

1828

Ի ՇՈՒՇԻ

## ԳԼ. Ա.

### Յաղագս արարչագործութեան աշխարհի:

Հարցումն.

Ո՞վ ստեղծ զաշխարհս:

Պատասխանի

Աստուած:

Հարց. Յորմէ՞ ստեղծ:

Պատ. Յոչընչէ:

Հարց. Որպէս ստեղծ զայն:

Պատ. Բանիւն իւրով:

Հարց. Առ ի՞նչ վախճան:

Պատ. Վասն փառաբանութեան անուան իւրոյ, և յայտնելոյ արարածոց զբարութիւն ա՟ծութեան:

Հարց. Ի քանի՞ աւուրս արար զայն:

Պատ.

Պատ․ Ի վեց աւուրս ։

Հարց․ Զի՞նչ արար յառաջնում աւուր ։

Պատ․ Զերկինս և զերկիր, և ապա զլոյս ։

Հարց․ Զի՞նչ արար յերկրորդում աւուր ։

Պատ․ Զհաստատութիւն երկնից ։

Հարց․ Զի՞նչ արար յերրորդում աւուր ։

Պատ․ Բաժանեաց զջուրն 'ի հողոյ, և հրամայեաց երկրի արտադրել զբոյս և զտունկս ։

Հարց․ Զի՞նչ արար յաւուրն չորրորդի ։

Պատ․ Զարեգակն, զլուսին, և զաստեղս ։

Հարց․ Զի՞նչ արար յաւուրն հինգերորդի ։

Պատ․ Զթռչունս երկնից, և զձկունս ծովու ։

Հարց․ Զի՞նչ արար յաւուրն վեցերորդի ։

Պատ․ Գոյացոյց զերկրային կենդանիս, և արար զմարդն ըստ պատկերի իւրում ։

Հարց․ Որդեք արա՞ր ինչ յաւուրն եօթներորդի ։

Պատ․ Յետ ստեղծագործելոյ զարարածս զայսոսիկ այլևս նորագոյն ինչ ոչ արար ։

Հարց․ Յորմէ՞ ստեղծ նա զմարդն առաջին ։

Պատ․

Վարդ. Զմարմինն 'ի հողոյ, իսկ զհոգին ըստ պատկերի և ըստ նմանութեան իւրոյ։

Աշակ. Վ̃ն է՞ր արար Ած զմարդն։

Վարդ. Վ̃ն զի ծանիցէ զնա և սիրեսցէ, նա և եղիցի պիտանացու յամենայնի։

Աշակ. Յորմէ՞ արարաւ Եւայ՝ կինն նախնի։

Վարդ. 'Ի կողէն Ադամայ։

Աշակ. Վասն է՞ր այդպէս։

Վարդ. Առ 'ի ցուցանել՝ թէ նոքա երկոքեանն 'ի միոյ մարմնոյ են։

Աշակ. Զի՞նչ էր դրախտն երկրային։

Վարդ. Էր տեղի ծառատունկ և վայելուչ, զոր Ած ետ Ադամայ և Եւայի 'ի բնակութիւն նոցա։

Աշակ. Յո՞րպիսի կացութեան էին նոքա անդ։

Վարդ. 'Ի բարի կացութեան. և էին անմահք։

## Գլ. Բ.

### Յաղագս յանցմանց նախածնողացն մերոց։

Աշակ. Մնացի՞ն արդեօք նոքա միշտ 'ի բ̃ե

և

և յերանելի կացութեան յայնմիկ ։

Պատ. Ոչ. այլ կորուսին զայն, անցանելով զպատուիրանաւն Տն Այ ստեղծողին իւրեանց ։

Հարց. Ով եղև պատճառ նոցա ։

Պատ. Սատանայ, որ պատրեաց զեւայ ճաշակել զպտուղն մահու, որ արգելեալն էր յԱյ. և եւս հաճանեցոյց զայրն իւր ՚ի յուտել և կերին ։

Հարց. Որպէս պատժեաց ած զադամ և զեւայ վն ուտելոյն ։

Պատ. Արտաքսեաց զնոսա յերկրաւոր դրախտէն ։

Հարց. Եթող մխիթարութե ինչ նոցա յայնպիսի կացութե անդ ։

Պատ. Այո. քանզի խոստացաւ նոցա ըստ ժամանակին առաքել զփրկիչ. որ ջախջախեսցէ զիշխանութիւն սատանայի ։

Հարց. Յորպիսի կացութեան մնացին նոքա յետ պատուիրանազանցութեն ։

Պատ. ՚Ի մեծի թշուառութե ըստ հոգւոյ և ըստ մարմնոյ ։

Հարց. Ո՞րպիսի չարիք հասնին մարմնոյ նոցա ։

Պատ. Աշխատանք մեծ, անհանգիստ կեանք, ցաւք, եւ մահ եւս ։

Հարց. Իսկ հոգւոյ նոցա զի՞նչ չարիք հասին ։

Պատ. Մթութիւն մտաց, եւ փոխարկութիւն զուարճութեանց ։

Հարց. Ի՞ ժամանէ զի՞նչ յառաջեաց ։

Պատ. Ամենայն մեղք ։

Հարց. Իսկ ՚ի մեղա՞ց ։

Պատ. Մահ մշտնջենաւոր ։

Հարց. Ո՞յք էին նախկին զաւակք նոցա ։

Պատ. Աբէլ եւ Կայէն ։

Հարց. Ո՞րք ծնան նոքա զնոսա ։

Պատ. Զկնի մեղանչելոյն իւրեանց ։

Հարց. Ունե՞ն արդեօք որդիք նոցին մասնակից մեղաց նոցա.

Պատ. Ունեն. ՚ոչ միայն որդիք նց, այլեւ որդիք որդւոց նոցին ։

Հարց. Տակաւին տեւէ՞ մասնակցութիւն այս ։

Պատ. Անփոփոխապէս ամենայն մարդիկ
այսու մեղօք
ծնանին ։

Հարց

## Գլ. Գ.

Յաղագս ջրհեղեղին. և բնական օրինաց ։

Հարց. Ո՞ եղև առաջին մարդասպան յաշխարհի։
Պատ. Կայէն, որ սպան զեղբայրն իւր զաբէլ։
Հարց. Վասն է՞ր սպան զնա ։
Պատ. Վասն զի նախանձեցաւ ը̄ առաքինութիւն եղբօրն՝ զոր Ա՟ծ սիրէր ։
Հարց. Արդեօք ա̄մ մարդիկ այնպէս չարաբարո՞յք եղեն որպէս Կայէն ։
Պատ. Ըստ մեծի մասին ։
Հարց. Ո՛չ ո՞ք մնաց հաճոյ աստուծոյ ։
Պատ. Նոյ միայն հաճոյ եղև ա̄յ ։
Հարց. Ո՞պ պատժեաց զնոսա ա̄ծ ։
Պատ. Ջրհեղեղաւ ։
Հարց. Զի՞նչ է ջրհեղեղդ այդ ։
Պատ. Մեծագոյն հեղեղ ջուրց, որ ծածկեաց զա̄մ երկիր ։
Հարց. Զի՞նչ եղեն մարդիկ ։
Պատ. Նոքա ամենեքեան ընկղմեցան և մեռան ։

Հարց

Հարց. Իսկ այլ կենդանիք զի՞նչ եղեն ։

Պատ. Նմանապէս մեռան ։

Հարց. Նոյ նահապետն զի՞արդ ապրեցաւ ։

Պատ. Պահեաց զնա աստուած ՚ի տապանի ։

Հարց. Զի՞նչ էր տապանն նոյի ։

Պատ. Նաւ մեծ պատեալ յերկուց կողմանց, ներքուստ և արտաքուստ ։

Հարց. Նա միայն փրկեցաւ անդ ։

Պատ. Որդիքն և ընտանիք իւր ։

Հարց. Ի կենդանեաց ևս եղե՞ն փրկեալ ։

Պատ. Եօթն եօթն ՚ի մք, և երկու երկու յանմք ամ տեսակ կենդանեաց ապրեցան՝ ըստ կամացն Այ ։

Հարց. Ամենայն մարդիկ ըստ որում մարդ՝ եղբարք մի՞ են ։

Պատ. Այո վասն զի՝ մեք ամենեքեան յադամայ և ՚ի նոյէ յառաջանամք ։

Հարց. Զի՞նչ են բնական օրէնքն ։

Պատ. Գիտութիւն և խղճմտանք ։

Հարց. Նոքա զի՞նչ ուսուցանեն մեզ՝ նկատմամբ Այ ։

Պատ. Զի բաց ՚ի նմանէ ոչ զոք համարեսցուք աստուած.

աստուած . և օրհնաց նր կատարելապէս հնազանդեսցուք ։

Հարց. Ի՞ կողմանէ մարդկան որպէս ։

Պատ. Զի մի՛ արասցուք այլոց այնպիսի ինչ, զոր ինչ ոչ կամիմք՝ թէ արասցեն մեզ ։

Հարց. Իսկ ՚ի մերոյս կողմանէ որպէս ։

Պատ. Զափաւորել զիղձս և զկամեցողութիւնս մեր ։

Հարց. Ազգք և տոհմականք նոյն պահեցի՞ն արդեօք զօրէնս զայս ։

Պատ. Ո՛չ. այլ առաւել ևս ամբարշտեցան ։

Հարց. Ի՞նչ մեղան նոքա ընդդէմ այ ։

Պատ. Ի տեղի ածպաշտութե ի մեծի մասին երկրպագէին արեգական, լուսնի, և այլ արարածոց ։

Հարց. Մի՞թէ և ՚ի մէջ իւրեանց զայլ զանօրէնութիւն ինչ գործեցին ։

Պատ. Նոքա զծնողս իւրեանց ՚ոչ պատուէին, սպանանէին, կողոպտէին և զմիմեանս զրպարտէին. զարդարսն ՚ոչ պահպանէին, և յամի հետևէին չար ըղձից և անկարգ կրից իւրեանց ։

## Գլ. Գ.

### Յաղագս Աբրահամու և այլոց Նախահարց.

Հարց. Յետ ջրհեղեղին ո՞ւր պահպանեցաւ օրէնքն բնական։

Պատ. Ի մէջ ցեղին Սեմայ.

Հարց. Ընդ ո՞ւմ ուխտեաց ա͞ծ.

Պատ. Ընդ Աբրահամու։

Հարց. Զի՞նչ խոստացաւ նմա.

Պատ. Առնել զնա ազգ մեծ.

Հարց. Զի՞նչ ևս.

Պատ. Տալ զերկիրն Քանանու.

Հարց. Զի՞նչ խոստացաւ նմա ա͞ծ առաւել ևս հարկաւորագոյն։

Պատ. Ա͞ն անուան նորա օրհնել զա͞մ ժողովուրդս երկրի.

Հարց. Զի՞նչ նշանակէր այդ.

Պատ. Զի փրկիչն աշխարհի ծնանելոց էր ՚ի զաւակէ նորին. որպէս և եղև իսկ.

Հարց. Զի՞նչ էր նշան խոստմանն ա͞յ ընդ Աբրահամու.

Պատ. Թլփատութիւնն.

Հարց

Հարց. Ո՞վ էր որդին աբրահամու։

Պատ. Իսահակ։

Հարց. Ընդէ՞ր կամեցաւ հայրն աբրահամ պատարագ մատուցանել զիսահակ որդի իւր։

Պատ. Զի ցուցցէ այնու զհնազանդութիւն իւր այ։

Հարց. Ո՞յր աղագաւ զայն հրամայեաց նմա ած։

Պատ. Զի փորձեսցէ զհաւատս նր։

Հարց. Ո՞վ էր յակոբ։

Պատ. Որդին իսահակայ։

Հարց. Այլով կերպիւ զի՞նչ անուանիւր։

Պատ. Իսրայէլ։

Հարց. Քանի՞ որդիս ունէր նա։

Պատ. Երկոտասան։

Հարց. Զի՞նչ անուանին նոքա։

Պատ. Նահապետք։

## Գլ. Ե։

Յաղագս գործոց եգիպտացւոց. և վասն պատժին։

Հարց. Ո՞վ էր յովսէփ։

Պատ. Մի՛ն յերկոտասան որդւոցն յակոբայ նահապետին ։ Եղբարք նորա վաճառեցին զնա առ նախանձու ․ իսկ նա ընդ երկար ժամանակս եկաց յեգիպտոս իբրև ըզծառայ ․ ապա մեծամեծ փառս ընկալաւ ՚ի փարաւոն Թագաւորէն ։

Հարց. Զի՞նչ արար նա ը͞դ եղբարս իւր փոխարէն չարութե͞ն նոցա ։

Պատ. Նա ներեաց նոցա, և բնակեցոյց զնոսա յեգիպտոս հանդերձ ա͞մ ընտանեօքն իւրեանց ։

Հարց. Զի՞նչ անցք անցին ընդ որդիսն իսրայէլի ՚ի յեգիպտոս ։

Պատ. Նոքա բազմացան յոյժ ։

Հարց. Զի՞նչ գործեաց ընդ նոսա այլ Թագաւորն եգիպտացւոց, որ ՚ոչ ճանաչէր զյովսէփ ։

Պատ. Կամեցաւ սպանել զամենեսին ․

Հարց. Ո՞վ պահեաց զն͞ս ՚ի նմանէ ։

Պատ. Ա͞Ծ ։

Հարց. Զո՞ առաքեաց ա͞ծ ՚ի փրկել զնոսա ։

Պատ. Զմովսէս ։

Հարց

Հարց. Զի՞նչ արար մովսէս:

Պատ. Սքանչելիս մեծամեծս, որովք ստիպեր փարաւոնի կատարել զհրամանն այ:

Հարց. Զի՞նչ էր պասեքն:

Պատ. Պասեքն էր գառն՝ սահմանեալ յողջա կեզ. և զոր կերին իսրայելացիք փոքր-ինչ՝ յառաջ քան զելանելն իւրեանց յեգիպտոսէ, և զազատութիւնն անտի:

Հարց. Զի՞նչ նշանակեր ազատիլն իսրայե-լացւոց:

Պատ. Քանզի փրկելոց էր Տն ըստ իւր խոստ-մանն զամենայն մարդիկ 'ի մեղաց և 'ի սատանայէ:

## ԳԼ. Զ:

Յաղագս ուղեգնացութեան յանապատն.

Հարց. Ո՞ւր գնացին իսրայելացիք յետ ելից իւրեանց յեգիպտոսէ:

Պատ. Յերկիրն քանանացւոց, ուր եած զնոսա աստուած.

Հարց

Հարց. Ընդէ՞ր եած զնոսա անդ։

Պատ. Զի կատարեսցէ զխոստումն իւր։

Հարց. Որպէս անցին նոքա ընդ ծովն կարմիր։

Պատ. Յարոյց Ած զհողմն, որով պատառել զծովն՝ եբաց զյատակ նորա. ընդ որ անցին նոքա առանց վնասու։

Հարց. Ապա ընդ ո՞ր գնացին։

Պատ. Ընդ անապատն մեծ։

Հարց. Զի՞նչ կերին նոքա անդ։

Պատ. Մանանայ՝ զոր առաքեաց Ած վասն նց ի յերկնից։

Հարց. Երբ նք ոչ կարացին գտանել զջուր. ապա ուստի՞ գտին զայն։

Պատ. Ած բղխեցոյց ի վիմէ։

Հարց. Երբ ետ նոցա Ած զօրէնս իւր։

Պատ. Յետ յիսուն աւուրց ելանելոյն նոցա։

Հարց. Յո՞րում տեղւոջ։

Պատ. Ի լեառն Սինայ։

Հարց. Որպէս երեւեցաւ լեառնն այն։

Պատ. Հրով, որոտմամբ, եւ կայծակամբք կործանեալ։

Հարց. Ասա ինձ զպատգամսն զորս ետ նոցա աստուած։

Պատ

Պատ. Նախ՝ ես եմ տէր Աստուած քո, որ հանի զքեզ ՚ի ծառայութենէ եգիպտացւոց. և մի՛ եղիցին քեզ այլ Աստուածք բաց յինէն: Երկրորդ. մի՛ արասցես քեզ կուռս՝ և մի՛ այլ ինչ որք նմանիցին նոցա. և մի՛ երկրպագանիցես նոցա: Երրորդ. մի՛ դնիցես զանուն Աստուծոյ քոյ ՚ի վերայ սնոտեաց: Չորրորդ. յիշեա զի սրբեսցես զօր շաբաթուն, որ է հանգիստ եօթներորդ աւուրն: Հինգերորդ. պատուեա զհայր քո և զմայր, զի երկայնակեաց լինիցիս ՚ի վերայ երկրի, զոր խոստացաւ քեզ Աստուած: Վեցերորդ. մի՛ սպանաներ: Եօթներորդ. մի՛ շնար: Ութներորդ. մի՛ գողանար: Իններորդ. մի՛ սուտ վկայեր զընկերէ քումմէ: Տասներորդ. մի՛ ցանկանար այնց, որք են ընկերի քում:

Հարց. Մի՞ թէ չէ՞ին գրեցեալ տասնեքին պատգամքս այսոքիկ:

Պատ. ՚Ի վերայ երկուց քարեայ տախտակաց գծագրեալք էին յԱստուծոյ:

Հարց

Հարց. Յառաջ գիտակք էի՞ն պատգամացս այսոցիկ ։

Պատ. Այո. քանզի տասնաբանեայ պատգամքս ՚ի բնական օրինաց անտի են յառաջ եկեալ ։

## Գլ. Ե։

Յաղագս խոստմանցն աստուծոյ առ եբրայեցիսն ։

Հարց. Որպէ՞ս կերպիւ մատուցանէին զպատարագս ՚ի հնումն ։

Պատ. Զենուին զանասունս, և ապա խորովէին ՚ի վերայ սեղանոյն ։

Հարց. Ո՞ր էր սեղանն ։

Պատ. Առաջի խորանին վկայութեան ։

Հարց. Զի՞նչ պահէր ՚ի նմա ։

Պատ. Զարկղն կտակարանաց ։

Հարց. Զի՞նչ էր արկղն այն ։

Պատ. Էր արկղ ինչ պատեալ ներքուստ և արտաքուստ ոսկւով ։

Հարց. Զի՞նչ պահէր ՚ի նմա ։

Պատ. Երկու տախտակք օրինացն ։

Հարց

Հարց. Ո՞յք են քահանայքն ։

Պատ. Ահարոն և որդիք նորա ։

Հարց. Ո՞յք են ղեւտացիք ։

Պատ. Ամենեքեան որք ՚ի ցեղէն ղեւեայ . զորս կացուցեալ էին ՚ի սպասաւորութեան խորանին վկայութեան ։

Հարց. Որպիսի խոստումն արար Ած առ իսրայե-լացիսն ։

Պատ. Այնպէս որպէս ընդ աբրահամու ։

Հարց. Զի՞նչ խոստացաւ նմա Ած ։

Պատ. Խոստացաւ նմա առնել զնա իւր ժողովուրդ . բնակեցուցանել յերկրին քանանու . և տալ նոցա առատութիւն բարութեանց ։

Հարց. Իսկ ժողովուրդքն զի՞նչ խոստացան ։

Պատ. Սիրել զԱծ յամ սրտէ իւրեանց . և պահել զօրէնս նր ։

Հարց. Որպիսի պատժոյ ստորանկան նոքա ։

Պատ. Հալածմանց և ամենայն թշուառականութեանց ։

Հարց. Դաշինս այս պահեցա՞ւ բարեպէս ։

Պատ. ՚Ի կողմանէ ոչ բարեպէս ։

Հարց. Ո՞չի սքանչելիս արար Ած ո՞չ զի հա

սուս

սուսցէ զնոսա յերկիրն Քանանու ։

Վրդ. Յամաքեցոյց զգետն Յորդանան՝ յորժամ հարկ եղեւ նոցա անցանել ընդ այն ։

Աշկ. Իսկ ժողովուրդքն ո՞չ պահեցին զպատգամսն զայնոսիկ ըստ եղեալ դաշինսն ։

Վրդ. Այրի չափաւորապէս ։

Աշկ. Քանի՞ անգամ դառնացուցին զնա յանապատին պատուիրանազանցութ՟ն իւրեանց ։

Վրդ. Աւելի քան զտասն անգամ ։

Աշկ. Զի՞նչ արարին նոքա յետ բնակելոյն ՚ի խոստացեալ երկրին ։

Վրդ. Նոքա յաճախ երկրպագէին կռոց ՚ի տեղի այ՟ ։

## Դ՟Ս. Բ ։

### Յաղագս կռապաշտութեան ։

Աշկ. Կայի՞ն յայնմ ժամանակի եւս այլ ազգք որք երկրպագանէին կռոց ։

Վրդ. Բազումք էին որք ըստ հաճութ՟ն իւր-

եանց

եանց խորհեցան և արարին զնոսա ։

Հարց. Որպիսի կերպարանօք էին կուռքն այնոքիկ ։

Պատ. Ըստ կերպի առն, կնոջ, և կենդանեաց. զորս ն͞ք ա͞ծս և ա͞ծուհիս անուանէին ։

Հարց. Նոքա ո՞չ պաշտէին զն͞ս

Պատ. Նոքա աղաչէին զն͞ս և մատուցանէին ն͞ց զողջակէզս ։

Հարց. Ուստի՞ ծնաւ այնպիսի կուրութիւն ։

Պատ. Յայնմանէ, զի նոքա մոռացան զարարիչն իւրեանց ։

Հարց. Նոքա ո՞չ մոռացան զնա ։

Պատ. Ընկանելով ն͞ց ՚ի մէջ ա͞մ անօրէնութե͞ց և մոլեգնութեանց ախտացան . իսկ յետոյ զարհուրեցան և զճշմարտէն ա͞յ զմտաւ ածել. և սատանայն յայնժամ տեղի գտեալ՝ որսացաւ զն͞ս առ այն ։

Հարց. Զի՞նչ յառաջացաւ ՚ի կռապաշտութենէ անտի ։

Պատ. Նոյնն իսկ՝ որ էած զնոսա յա͞մ անօրէնութիւնս ։

Նոյն

Հարց. Այլով կերպիւ զի՞արդ կոչէին կուապաշտք:

Պատ. Հեթանոսք:

## ԳԼ. Թ.

Յաղագս Դաւթի և Սողոմոնի թագաւորացն Իսրայէլի:

Հարց. Ո՞րպէս կառավարութիւն ունէին Իսրայելացիքն ՚ի չուելն իւրեանց յերկիրն աւետեաց:

Պատ. Ունէին նախ դատաւորս՝ և ապա զթագաւորս:

Հարց. Ո՞վ էր առաջին թագաւորն:

Պատ. Սաւուղ:

Հարց. Ո՞վ էր երկրորդն:

Պատ. Դաւիթ:

Հարց. Յորմէ ցեղէ էր նա:

Պատ. ՚Ի ցեղէն յուդայ:

Հարց. Ու՞ր բնակէր նա:

Պատ. Յերուսաղէմ ՚ի լեառն սիօն:

Հարց. Ու՞ր հրամայեաց բերել զտապանակ ուխտին:

Պատ. Անդամնոր ՚ի լեառն սիօն:

Հարց

Հարց. Զի՞նչ խոստացաւ նմա ած:

Պատ. Զի յազգէ նորա միշտ թագաւորեսցեն ՚ի վերայ ժողովրդեան իւյ:

Հարց. Նոյն ևս զի՞նչ.

Պատ. Զի ՚ի նմանէ ծնանելոց էր փրկիչն Քրիստոս:

Հարց. Զի՞նչ նշանակէ բառս այս Քրիստոս:

Պատ. Նշանակէ օծեալ:

## ԳԼ. Ժ:

### Յաղագս շինման տաճարայնոյ:

Հարց. Ո՞վ էր ժառանգն Դաւթի:

Պատ. Սաղոմոն որդի նորա:

Հարց. Որպիսի կառավարութիւնս ունէր նա:

Պատ. Հանդարտօրէն և խաղաղութեամբ:

Հարց. Ունէ՞ր լաւագոյն ինչ ևս:

Պատ. Ունէր զճշմարիտ իմաստութիւն:

Հարց. Զի՞նչ արար նա:

Պատ. Շինեաց զտաճարն երուսաղէմի,

Հարց. Գո՞յր անդ այլ ևս տաճար, յորում երկրպագանէին աստուծոյ:

Պատ.

Պատ. Ո՛չ. մի միայն էր տաճար, և մի սեղան։

Հարց. Վասն է՞ր այդպէս։

Պատ. Առ ՚ի ցուցանել այնու՝ թէ մի միայն է ա՟ծ, և մի հաւատ։

Հարց. Պահեա՞ց սաղոմոն մինչև ցօր մահուան իւրոյ զիմաստութիւն իւր։

Պատ. Ո՛չ. այլ իգամոլութ՟ե խաւարեալ լուսոյ միտաց նորա զրկեցաւ յԱ՟ծպարգև իմաստութենէն։

Հարց. Զի՞նչ եղև զկնի մահուան նորա։

Պատ. Բաժանեցաւ թ՟գրութ՟ին ն՟ր։

Հարց. Զի՞նչ մնաց որդւոյ նորա։

Պատ. Յերկոտասան ցեղիցն անտի միայն երկու ցեղք, յուդայէն և բենիամենին։

Հարց. Ո՞վ եղև թագաւոր ՚ի վ՟ր մնացեալ տասն ցեղիցն։

Պատ. Յերոբովամ ծառայ սաղոմոնի։

Հարց. Զի՞նչ արար նա առ ՚ի հաստատել զաթոռ իւր։

Պատ. Նա արար զհերձուածս։

Հարց. Զի՞նչ է հերձուած ասելդ այդ։

Պատ. Որոշումն եկեղեցեաց։

Հարց

Հարց. Ո՞ւր եկաց ճշմարիտ եկեղեցին։

Պատ. Ի յԵրուսաղէմ։

Հարց. Ո՞ր քաղաք էր աթոռանիստ Թագաւորութեանն իսրայէլացւոց, և սուտ եկեղեցւոյն։

Պատ. Սամարիայ։

## ԳԼ. ԺԼ.

### Յաղագս Մարգարէից։

Հարց. Ո՞վք էին մարգարէքն։

Պատ. Նոքա լցեալք հոգւովն ա͞ծային։

Հարց. Ո՞վ էր հոգին այն։

Պատ. Հոգին ս͞բ ա͞ծ, որ զա͞մ արարածս կենդանացոյց։

Հարց. Վ͞ս ո՞յր կոչէին զնոսա մարգարէս։

Պատ. Վ͞ս այն զի զապագայս պատմէին։

Հարց. Ե՞րբ բազմացան նոքա։

Պատ. Զկնի բաժանման Թագաւորութեանն իսրայէլացւոց։

Հարց. Որո՞ց մարգարէից գրուածս ունիմք մեք։

Պատ. Եսայեայ, Երեմիայի, և այլոց. որք են թուով վեշտասանք։

Զինչ

Հարց․ Զի՞նչ գուշակեցին նոքա ։

Պատ․ Կատարելապէս կործանումն թագաւո–րութեանն սամարացւոց ։

Հարց․ Իսկ վ̃ն երուսաղէմի զի՞նչ ։

Պատ․ Զի նա աւերեսցի և վերստին կանգ–նեսցի ։

Հարց․ Ասացի՞ն նոքա բան ինչ յաղագս մեսի–ային ։

Պատ․ Այո․ ասացին նոքա կանխագոյն, շ̃տ զոր ինչ վասն ն̃ր լինելոց էր ։

Հարց․ Նախապատմեցի՞ն ինչ և յաղագս նորոյ կտակարանին ։

Պատ․ Նոքա նախագոյն ասացին՝ թէ նա կա–տարելագոյն է լինելոց քան զառաջինն ։

Հարց․ Զի՞նչ ասացին ն̃ք ՚ի կողմանէ հեթա–նոսաց ։

Պատ․ Թէ ա̃մ ժողովուրդք թողլոց են զկուռս, և երկիրպագանելոց են Ճշմարտին ա̃յ ։

ԳԼ.

## Գլ. ԺԲ.

### Յաղագս գերութեան Բաբելացւոց:

Հարց. Փութացա՞ւ ած ՚ի պատժել զիսրայէ-լացիս վասն մեղաց իւրեանց:

Պատ. Երկայնամիտ լինէր առ նոսա զժամանակս բազումս. զի գուցէ՞ թէ զղջացեալ դարձցին առ ինքն:

Հարց. Զի՞նչ եղև ընդ թագաւորութիւն սամարացւոց:

Պատ. Նոքա ամենայնիւ աւերեցան. իսկ տասն ցեղքն ՚ի զանազան կողմանս բնակեցան:

Հարց. Ո՞վ աւերեաց զԵրուսաղէմ:

Պատ. Նաբուգոդոնոսոր արքայն բաբիլացւոց:

Հարց. Զի՞նչ արար նա ընդ ժողովրդեանն հրէից:

Պատ. Գերեաց զնոսա:

Հարց. Ո՞ւր եկաց ճշմարիտ բարեպաշտութիւն.

Պատ. Հրեայք պահեցին զայն ՚ի ցեղս իւրեանց:

Հարց. Զի՞նչ կրօն գոյր ՚ի բաբիլօն:

Պատ. Կռապաշտութիւն, և աւելորդապաշտութիւն:

Հարց. Ո՞վ էր Դանիէլ:

Պատ. Այր սրբակենցաղ և մարգարէ:

Հարց. Զի՞նչ արարին երեքին ընկերք նորին:

Պատ. Նոքա ոչ կամեցան երկրպագանել կռոցըն արքային բաբելացւոց:

Հարց. Զի՞նչ արար նոցա Թագաւորն վ՟ այնորիկ:

Պատ. Հրամայեաց արկանել զնոսա ՚ի մէջ հնոցի հրոյն բորբոքելոյ:

Հարց. Անդամօր զի՞նչ անցք անցին զնոքօք:

Պատ. Պահեաց զնոսա Ա՟Ծ սքանչելեօք:

## ԳԼ. ԺԳ:

Յաղագս ազատութեանն հրէայեցւոց:

Հարց. Որո՞յ ձեռամբ ազատեաց Ա՟Ծ զհրէայսն ՚ի գերութենէն բաբելացւոց:

Պատ. ՚Ի ձեռն կիւրոս արքային պարսից:

Հարց. Առ ի՞նչ վախճան եղև խառնակութիւն հրէից ընդ այլ ազգս:

Պատ

Պատ․ Զի անհնարաւորք ճանաչէին զճշմարիտն աստուած ։

Հարց․ Անկա՞ն արդեօք հրեայքն վերստին ՚ի կռապաշտութիւն յետ գերութեան բաբելացւոց ։

Պատ․ Ո՛չ ևս ՚ոչ անկան ։

Հարց․ Ո՞վ նախ հալածեաց զնոսա վասն կրօնի իւրեանց ։

Պատ․ Անտիոքոս Թագաւորն Ասորւոց, որ էր ազգաւ յոյն ։

Հարց․ Ո՞վ եկաց ընդդէմ Անտիոքոսի ։

Պատ․ Յուդայ Մակաբէ, և եղբարք նորա ։

Հարց․ Զի՞նչ արարին նոքա ։

Պատ․ Դարձուցին զժողովուրդն ՚ի յապաշխարութիւն ։

Հարց․ Ո՞վ կառավարեաց զհրէայսն յայնմ ժամանակի ։

Պատ․ Նոյն այն տոհմ Մակաբէի ։

Հարց․ Ո՞վ սպառեաց զնոսա ։

Պատ․ Հռոմայեցիք ։

Հարց․ Ո՞վ էր Թագաւորն հրէից ՚ի ժամանակի ծննդեանն Քրիստոսի ։

Պատ․

Աշա. Ձերուղէս ։

Վարդ. Սխալե՞րդ կարծեն հրեայքն յաղա-
գըս գալստեանն Ք՞Ի ։

Աշա. Այնպէս կարծեն թէ Ք՞Ս թագաւորե-
լոց է ՚ի վ՞ր երկրի որպէս այլ թագա-
ւորք, և զ՞մ ազգս նուաճելոց է ընդ իշ-
խանութեամբ հրէից. և թէ ինքեանք
կելոց են ՚մ բարութ՞ք, պատուով և
ուրախութ՞ք. և այսպէս կոչէին մարմնա-
ւորք ։ Իսկ այլք՝ որք ծառայէին ճշմար-
տին ՚այ հաւատով և սիրով, զյոյս իւրե-
անց ՚ի նա դնէին, և հաւատային՝ թէ
Ք՞Ս գալոց է ՚ոչ զերկրաւոր թագաւոր-
ութիւն հաստատել, այլ զերկնայինն. Նա՛
ցուցանելոց է նոցա զճանապարհն ճշ-
մարտութե՛ ան ՚ի փրկութիւն, և յա-
րուցանելոց է զնոսա ՚ի մեռելոց, և
տանելոց ՚ի կեանս յաւիտենականս. և
ըստ այսմ կոչեցան նոքա
հոգևորականք ։ ԺԴ.

## Գլ. ԺԳ.

### Յաղագս ծննդեանն Յիսուսի Քրիստոսի ։

Հարց. Ո՞վ էր մայր Տեառն մերոյ ՅՍ ՔՍի ։

Պատ. Սրբուհի կոյսն Մարիամ ։

Հարց. Յո՞րմէ ցեղէ էր նա ։

Պատ. ՚Ի ցեղէն յուդայի ։

Հարց. Յորմէ՛ տոհմէ էր նա ։

Պատ. ՚Ի տոհմէն դաւթի ։

Հարց. Ո՞ւմ խօսեցեալ էր նա ։

Պատ. Սրբոյն յօսեփայ որ էր ՚ի նոյն տոհմէ . ո՟պ զի նա պահպանիչ լինէր կուսութեան նորա ։

Հարց. Ո՞վ յայտնեաց նմա թէ նա ծնանելոց է զՅիսուս Քրիստոս ։

Պատ. Գաբրիել հրեշտակն , զոր առաքեաց ած աւետել զայս ։

Հարց. Ո՞պ ընկալաւ նա զայս ։

Պատ. ՚Ի պատասխանւոյ հրեշտակին թէ՝ ( Հոգին ս՟բ եկեսցէ ՚ի քեզ ) հաւատաց՝ թէ կոյս մնալոց էր ։

Հարց. Յետ այնորիկ զի՞նչ հետևեցաւ ։

Պատ. Բանն հօր և որդին ա̃յ էառ զնոյն մարդ-կութ̃ին ո̃պ ունիմք և մեք՝ բաց 'ի մե-ղաց :

Հարց. Ո՞ւր ծնաւ Տէրն մեր :

Պատ. 'Ի բեթղեհեմ հրէաստանի :

Հարց. Զի՞նչ նշանակէ բառս այս Յիսուս :

Պատ. Փրկիչ :

Հարց. Ո՞վք հեթանոսք էին որք նախ երկիր-պագին նմա :

Պատ. Մոգքն՝ որք եկին 'ի յարևելից :

Հարց. Զի՞նչ արար հերովդէս յայնժամ :

Պատ. Նա լուաւ 'ի նոյն մոգուց . և գիտէր զնախագուշակութ̃ն մարգարէիցն՝ թէ յայ-նըմ ժամանակի ծնանելոց էր մեսիայն . և քանզի կարծէր՝ թէ լինելոց է նա թա-գաւոր երկրի, երկեաւ կորուսանել ըզ-թագաւորութ̃ն իւր . վ̃ս որոյ հրամայեաց կոտորել զամենայն մանկունսն՝ որք էին 'ի բեթղեհեմ և յամ̃ սահմանս նորա . ո̃պ զի և զնա ը̃ նոսա մեռուսցէ :

Հարց. Որպէս զերծաւ Յ̃ս :

Պատ. Հրեշտակն հրամայեաց յովսեփայ 'ի բաց գնալ

գնալ ընդ նմա 'ի յեգիպտոս ։ Իսկ յորժամ մեռաւ Հերովդէս, նոյն հրեշտակն հրամայեաց դառնալ 'ի յեգիպտոսէ 'ի հրէաստան. և յովսեփայ հնազանդեալ գնաց ըստ հրամանի ծն̃ 'ի քաղաքն գալիլեացւոց, որ կոչիւր նազարէթ ։

## Գլ. Ժ. ։

### Յաղագս Յովհաննու մկրտչին ։

Հարց. Ո՛յր որդի է սուրբն յօհաննէս ։

Պատ. Զաքարիայի և եղիսաբեթի, որ էր մօրաքոյր սրբուհւոյ կուսին Մարիամու ։

Հարց. Ո՞ւր բնակեցաւ նա ։

Պատ. 'Ի յանապատի. և ունէր զկեանս կարի ժուժկալս ։

Հարց. Խօսեցա՞ն ինչ զնմանէ մարգարէքն ։

Պատ. Նք նախագուշակեցին զնա՝ կարապետ մեսիայի ։

Հարց. Զ՞ինչ է կարապետդ այդ ։

Պատ. Նա որ նախընթաց լինի առաջի ուրուք ։

Հարց. Զ՞ինչ քարոզեաց յօհաննէս ։

Պատ.

Պտս. Յորդորեաց զամենեսեան յապաշխարութիւն։

Հարց. Զի՞նչ արար ընդ այնոսիկ զորս դարձոյց։

Պտս. Մկրտեաց զնոսա ընկղմելով ՚ի յորդանան գետ։

Հարց. Մկրտեա՞ց նա և զՅս՟։

Պտս. Այո. Յս՟ կամեցաւ մկրտիլ առ ՚ի սրբել զջուրն մկրտութեան։

Հարց. Զի՞նչ պատահեցաւ ՚ի ժամ մկրտութեան նորա։

Պտս. Հոգին ս՟բ էջ ՚ի վ՟ր ն՟ր ակներև. և լսելի եղև յերկնից ձայնն հայրական, թէ դա է որդի իմ սիրելի ընդ որում ես հաճեցայ։

Հարց. Զի՞նչ վկայեաց յօհաննէս վասն Յիսուսի Քրիստոսի։

Պտս. Վկայեաց թէ եկն փրկել զաշխարհս ՚ի մեղաց, և ՚ի դատապարտութենէ նորին։

ԳԼ.

## ԳԼ. ԺԶ.

### Յաղագս կոչման Առաքելոց։

Հարց. Ո՞ւր գնաց Յիսուս յետ մկրտութեանն իւրոյ։

Պատ. Ի յանապատ։

Հարց. Զի՞նչ արար նա անդ։

Պատ. Պահեաց զքառասուն աւուրս։

Հարց. Ո՞րպէս կոչեաց զաշակերտս իւր։

Պատ. Ասաց նոցա՝ եկայք զկնի իմ. և նոցա վաղվաղակի թողեալ զամենայն՝ չոգան զհետ նորա։

Հարց. Զի՞նչ են աշակերտքդ։

Պատ. Մարդիկ որք ունկնդիր լինէին ուսուցչին իւրեանց, և հետևէին վարդապետութեան նորա։

Հարց. Զի՞նչ նշանակէ անունն առաքեալ։

Պատ. Դեսպան կամ՝ [illegible]։

Հարց. Քանի՞ առաքեալս ընտրեաց Քրիստոս վասն իւր։

Պատ. Երկոտասան։

Հարց. Ասա ինձ զանուանս նոցա։

Պատ. Սիմոն Պետրոս, և [illegible] Անդրէաս եղ-

բայր

բայր նր̃․ ս̃բն Յակոբոս, և ս̃բն Յօհաննէս որդիքն զեբեդեայ։ ս̃բն Փիլիպպոս, ս̃բն Բարթուղիմէոս․ ս̃բն Մատթէոս, ս̃բն Թօմաս․ ս̃բն Յակոբ, և ս̃բն Յուդայ, որ է Թադէոս, որդիքն ալփեայ․ սուրբն Սիմոն, և մատնիչն հրէից յուդայ իսկարիօտացի։

## Գլ. ԺԼ.

### Յաղագս փրկագործութեան Յիսուսի Քրիստոսի։

Հարց․ Զի՞նչ արար Յիսուս։

Պատ․ Քարոզեաց ՚ի քաղաքս, ՚ի գիւղս, և յայլ տեղիս։

Հարց․ Զի՞նչ քարոզեաց նա։

Պատ․ Զաւետարանն արքայութեան երկնից։

Հարց․ Զի՞նչ նշանակէ բառդ աւետարան։

Պատ․ Լուր ախորժելի։

Հարց․ Զի՞նչ է արքայութիւն երկնից։

Պատ․ Պարգևք ա̃յ վ̃ն բարեգործաց, և կեանք յաւիտենական ընդ Ա̃յ և ընդ սրբոց։

Հարց․ Զի՞նչ ասաց Յ̃ս վասն ինքեան։

Պատ․ Զի նա էառ և յայտնեցաւ ՚ի մարդկութեան, զի փրկեսցէ զմարդ։

Հարց. Զի՞նչ հրամայեաց առնել։

Պատ. Հաւատալ ՚ի նա, հնազանդել վարդապետութե՜ նորա, և ապաշխարել։

Հարց. Վ՜ն է՞ր ապաշխարել։

Պատ. Վասն ընդունելոյ զթողութիւն մեղաց։

Հարց. Ի՞ւ հաստատէր՝ թէ ինքն է որդին Ա՜յ։

Պատ. Սքանչելեօք։

Հարց. Զի՞նչ սքանչելիս արար նա։

Պատ. Բժշկեաց զա՜մ ցաւս, հալածեաց զդևս, և յարոյց զմեռեալս։

Հարց. Զի՞նչ օրինակս եցոյց նա մեզ։

Պատ. Զա՜մ առաքինութե՜ս մանաւանդ զխոնարհութիւն, զհեզութի՜, զգթածութի՜, զողորմածութիւն, և զնախանձ վ՜ն ճշմարտութեան։

Հարց. Զի՞նչ էր վախճան գործոց նորին։

Պատ. Փառք հօրն իւրոյ, և լրու՜մն կամաց նորա։

Հարց. Ո՞րպիսի աղօթս ուսոյց մեզ։

Պատ. Հայր մեր՝ որ յերկինս ես. սբ՜ եղիցի անուն քո. եկեսցէ արքայութի՜ քո. եղիցին կամք քո որպէս յերկինս և յերկրի։

Զհաց

Զհաց մեր հանապազորդ տուր մեզ այսօր. և թող մեզ զպարտիս մեր, ոպ՟ և մեք թողումք մերոց պարտապանաց. և մի՛ տանիր զմեզ 'ի փորձութիւն. այլ փրկեա՛ զմեզ 'ի չարէ։

Հարց. Գնայի՞ն արդեօք ամենեքեան զհետ նորա կամ լսէի՞ն քարոզութե՟ նորա։

Պատ. Ժողովուրդք յամ՟ ուստեքէ գունդ գունդ գնային լսել զքարոզութիւն նորա. բայց միայն այնոքիկ որք տուեա՛լ էին զինքեանս 'ի կամս ախտից, 'ոչ անսային խրատուց նորա, և 'ոչ կամեցան 'ի բաց կալ յանօրէն վարուց. վ՟ո որոյ՝ քարոզութիւն նո՟ր խայթէր զխղճմտանս նոցա. ուստի և ծնա՛ւ 'ի նոսա նախանձ ընդդէմ նորա։

Հարց. Ո՞յք էին առաւել թշնամիք նորա։

Պատ. Դպիրքն և փարիսեցիքն։

Հարց. Որպիսի ոք էին դպիրքն։

Պատ. Ուսուցիչք օրինաց։

Հարց. Իսկ փարիսեցիքն ո՞յք էին։

Պատ. Այնոքիկ՝ որք գեր քան զամենայն զպահպանումն օրինաց պարտականութիւն դնէին ինքեանց։

Հարց

Հարց. Առաքինաբա՞ր կենցաղավարէին նոքա ։

Պատ. Ո՛չ. այլ ըստ մեծի մասին կեղծաւորք էին նոքա ։

Հարց. Յո՞ր վայր տղղեաց չար նախանձ Թշնամեաց Յիսուսի ։

Պատ. Մինչև ցայն, զի ջանացին մեռուցանել զնա ։

Հարց. Ո՞վ խոստացաւ մատնել զնա նոցա ։

Պատ. Յուդայ իսկարիովտացի, մի յերկոտասանից առաքելոցն ։

Հարց. Որքանոյ վաճառեաց ։

Պատ. Երեսուն արծաթոյ ։

## ԳԼ. ԺԸ։

### Յաղագս չարչարանաց և մահուանն ՅԻ ՔԻ ։

Հարց. Յորում ժամանակի մեռաւ Յիսուս ։

Պատ. ՚Ի ժամանակի զատկին, զոր պասեք ասէին ։

Հարց. Զի՞նչ արար ՚ի վերջին երեկոյին ընդ առաքեալսն իւր ։

Պատ. Կամելով հաստատարմացուցանել՝ Թէ ՚ոչ է մեկնելոց յամ հաստատելոց. աւանդեաց

դեաց

դեաց զխորհուրդ սուրբ հաղորդութեան ։

Հարց. Որո՞վ կերպիւ ։

Պատ. Առեալ զհաց, օրհնեաց և ետ նոցա ասելով. այս է մարմին իմ. և ապա առեալ զբաժակն գինեաւ՝ ասաց. այս է արիւն իմ որ հեղանի ՚ի թողութիւն մեղաց. և ՚ի վ՜ր այսմիկ խորհրդոյ հիմնեաց զնոր ուխտ մարդկան ընդ ա՜յ ։

Հարց. Յետ երեկոյին զի՞նչ արար Յիսուս ։

Պատ. Առանձնացեալ եկաց յաղօթս ռա̄լ զմարդ, և ետ զինքն ՚ի կամս և ՚ի հաճութիւն հօր ։

Հարց. Յայնժամ յուդայ զի՞նչ արար ։

Պատ. Ած զինուորս զի կալցեն զՅիսուս ։

Հարց. Ո՞ւր տարան զնա ։

Պատ. Առ քահանայապետն կայիափայ ։

Հարց. Պետրոս զի՞նչ արար ։

Պատ. Ի հարցանելն թէ աշակերտ էցէ Ք՜ի, ուրացաւ զնա. սակայն յետ այնորիկ մեծապէս զղջացաւ ։

Հարց. Ի կայիափայէ ո՞ւր ածին զՅիսուս ։

Պատ. Առ պիղատոս ։

Հարց. Զի՞նչ արարին նմա անդ ։

Պատ. Եդին ՚ի գլուխ նր̄ զպսակ, արարեալ ՚ի փշոց։

Հարց. Եւ՞ ապա զի՞նչ։

Պատ. Հանին զնա ՚ի խաչ։

Հարց. Ո՞րպ̄ աւանդեաց նա զհոգին իւր ՚ի վերայ խաչին։

Պատ. Այսու բանիւ. Հա՛յր ՚ի ձեռս քո աւանդեմ զհոգի իմ. յայնժամ բաժանեցաւ հոգին ՚ի մարմնոյն։

Հարց. Զի՞նչ պատահեցաւ ՚ի ժամու մահուան նորա։

Պատ. Արեգակն խաւարեցաւ, երկիր շարժեցաւ, վէմք պատառեցան, և բազում մարմինք ննջեցելոց սրբոց յարեան։

Հարց Մահ նորա ո՞րպիսի կերպիւ եղև պատարագ։

Պատ. Վասնզի մահն ելից զա̄ծային արդարութի̄ն վն̄ մեղաց ամենայն մարդկան. որոյ աղագաւ արկեալք էին ՚ի ներքոյ յաւիտենականի մահուան։

Գ.Լ.

## ԳԼ. ԺԹ.

### Յաղագս Յարութեան Յիսուսի Քրիստոսի ։

Հարց. Յետ մահուանն Յիսուսի զի՞նչ արա-րին զմարմին նորա ։

Պատ. Եդին ՚ի գերեզմանի ։

Հարց. Թշնամիք նո՛ր զի՞նչ արարին ։

Պատ Գիտելով նո՛ցա զմարգարէութիւնն, թէ Քրի՟ պարտէր յառնել. եդին զպահա-պանս, երկնչելով զի մի՛ կատարեսցի այն ՚ի վերայ նորա ։

Հարց. Յորո՞ւմ աւուր յարեաւ Յս՟ ։

Պատ. Յերրորդում աւուր յետ մահուան իւ-րոյ ։

Հարց. Փութո՞վ հաւատացին առաքեալքն յա-րութեան Յիսուսի ։

Պատ. Նոքա տեսին զնա և շօշափեցին ։

Հարց. Ո՞րքան ժամանակս եկաց նա ընդ նոսա ։

Պատ. Զ աւուրս քառասուն ։

Հարց. Զի՞նչ պատուիրեաց նոցա .

Պատ. Երթալ յաշխարհ ամ՟, քարոզել ճշ-մարտութիւն ամենեցուն զհաւատս և

զբարի

զբարեգործութիւն. դարձուցանել յանօրէն վարուց. ածել զնոսա յապաշխարութիւն. և որք անկեղծօրէն ընդունին զքարոզութիւն նոցա, միաւորել զնոսա մկրտութեամբ ընդ սրբոյ եկեղեցւոյ:

Հարց. Ի ձեռն խորհրդոյ մկրտութեան զի՞նչ ուսոյց նա մեզ:

Պատ. Թէ հայր որդի և սուրբ հոգի է՛ ճշմարիտ Աստուած:

Հարց. Որպիսի իշխանութիւն ետ առաքելոց իւրոց:

Պատ. Թողուլ զմեղս:

Հարց. Նա ո՞ւր եթող զնոսա:

Պատ. Համբարձաւ յերկինս ակն յանդիման նոցա ամենեցուն:

Հարց. Յորպիսի կացութեան յայսմ յօրէ մնայ նա մինչև ՚ի յաւիտեան:

Պատ. Նովին մարմնովն, ՚ի վեր քան զամենայն արարածս փառաւորեալ յամենայն արարածոց:

Հարց. Զի՞նչ խոստացաւ առաքելոց ՚ի ժամ համբարձմանն իւրոյ յերկինս:

Պատ. Խոստացաւ ոչ մեկնել յեկեղեցւոյ իւրոյ, և յամենայն քրիստոնէից մինչև ցկատարած աշխարհի:

Հարց

Հարց. Երկի՞ցս գալոց է յաշխարհ ։

Պատ. Երկրորդ գալոց է ՚ի դատել զկենդանիս և զմեռեալս յաւուրն վերջնում ։

## Գլ. Ի.

Յաղագս իջման Հոգւոյն սրբոյ յառաքեալսն .

Հարց. Զի՞նչ էր պենտեկոստէն, կամ յիսնեակն հրէից ։

Պատ. Էր տօն մեծ, յորում ԱԾ տուեալ էր նոցա զօրէնս ։

Հարց. Յայնմ աւուր զի՞նչ պատահեցաւ առաքելոցն ։

Պատ. Նոքա ընկալան զՀոգին սբ ։

Հարց. Որպիսի զօրութիւն ազդեաց ՚ի նոսա ։

Պատ. Լուսաւորեաց զմիտս նոցա՝ առ ՚ի իմանալ զգիրս սբս ։

Հարց. Զի՞նչ ևս զգացին նոքա ։

Պատ. Սէր մեծ առ ած ։

Հարց. Ի յընկալնուլն նոցա զՀոգին սբ զի՞նչ. արարին նոքա ։

Պատ. Սկսան խօսիլ զլեզուս զանազանս ։

Հարց

Հարց. Զի՞նչ նշանակեաց սքանչելիքս այս։

Պատ. Թէ պարտէր նոցա քարոզել զաւետարանն ամենայն ազգաց։

Հարց. Յայնժամ սուրբն Պետրոս զի՞նչ արար։

Պատ. Լցեալ հոգւով սրբով սկսաւ քարոզել կարի ազդեցութեամբ, որով զբազումս եած ՚ի զղջումն. և վկայութեամբ ստուգեաց զաւետարանական ճշմարտութիւնն, այնքան՝ մինչ զի ՚ի նմին ժամու դարձան ՚ի ժողովրդենէ անտի իբրև երեք հազար արք։

Հարց. Ապա նա՝ և միւս առաքեալքն զի՞նչ արարին։

Պատ. Նոքա մեծային զօրութեամբն արարին ըզսքանչելիս մեծամեծս. և քարոզութիւն նոցա էր հոգւովն Աստուծոյ, որով ածին զամենայն ժողովուրդս ՚ի հաւատս Քրիստոսի։

Հարց. Վասն է՞ր հոգին սուրբ առաքեցաւ ՚ի նոյն աւուր պենտեկոստէի։

Պատ. Զի ՚ի նմին իսկ աւուր յայտնէր զնոր օրէնս, յորում տուեալ էր զհին։